ժողովածուի կազմողին անհարկի կերպով հասկացնելով... հեղինակի իրավունք: Պիտի ներողություն հարկ, որ համալսարանի հրատարակչական հարգարժան խորհուրդը օժանդակել է մեծածախս այս հրատարակությանը՝ զոհ դառնալով խարուսիկ այն տպավորությանը, թե գործ ունի Դավիթ-Բեկի անվան հետ կապված մինչ այժմ անհայտ նյութերի հետ, որոնք ապրյուր են ծառայելու ոչ միայն XVIII դարի հայ ազատագրական շարժումների, այլև «հայ-ռուսական, հայ-ուկրաինական և հայ-լեհական հարաբերությունների պատմության համար»: Թյուրիմացաբար այդպես էլ հենց հայտարարված է գրքի տպագրության հրատարակչության հանձնարարականում»[23]:

Վ. Պարսամյանը այժմ խորամանկության դիմելով, չի անդրադառնում ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կարծիքին, իբր թե հետագա «մանրամասն վերլուծումներ ու լայն փաստարկումներ» անելու նպատակով, արհեստականորեն անջատում է այն մեր բնագատությունից:

Դա, իհարկե, նրա գործն է: Բայց մեր խոսքը ավարտելուց առաջ ուզում ենք նորից նշել, որ Վ. Պարսամյանի կազմած «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը» ժողովածուն իսկապես ձախողված գործ է, որի մեջ լայնորեն տեղ են գտել արտառոց սխալներ, աղավաղումներ, հակագիտական, շինծու պնդումներ և անհամեստության, ինքնառեկլամի ու անբարեխղճության զարմանալի օրինակներ:

Հ. Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.—«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1964 թ. № 3-ում տպագրելով պրոֆ. Վ. Պարսամյանի, ակադ. Ա. Հովհաննիսյանի և ընկ. Հ. Խաչատրյանի նամակները, նշել էինք, թե խմբագրությունը համամիտ է այն ընդհանուր գնահատականին, որ Ա. Հովհաննիսյանը և Հ. Խաչատրյանը տալիս են «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը» ժողովածուին: Խմբագրությունը այժմ ևս կանգնած է նույն տեսակետի վրա:

---

23 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 176—177։